

Սակայն պ. Երիցեան զիտէ իւր ժողոված նիւթե-  
 րն այնպէս գտառարեւէր այնպիսի կենդանի գոյ-  
 ներով նկարագրել զսրժող անեծքն և նոցա զսր-  
 ժողութիւններն յրամոտիական կողմն այնչափ ար-  
 առչայտիչ կերպով ներկայացնել, որ նորա զը-  
 րուածները կարգացուած են յերասի իրբև շատ  
 հեռաբերել պատմութիւններ և դասնում միան-  
 գամայն թէ կրթութեան միջոց հասարակ բն-  
 թերցողի համար և թէ լուրջ ուսումնասիրու-  
 թեան միջոց պատմագիտի համար: Ներսիսեան  
 զպրոցի պատմութեան նիւթը հարկաւ այնպիսի  
 բնաւորութիւն ունէր, որ այս վերջին կողմը հա-  
 մեմատաբար աւելի քէ է աչքի բնկնում այստեղ,  
 թէպէտ զլիսաւոր զսրժելներն ներսէս Ե. ի (պ.  
 Երիցեանի պատմագրութեան մշտական արժա-  
 նաւոր ճերտի), Յարութիւն քան. Այստեղարեանի,  
 Շահան Չարպեանի ևն. պատկերները կրկին վարպետ  
 զբշով զժամ են և նոցա զսրժումնութեան ար-  
 ժէքը խիստ սրշ կերպով գնահատած: Սակայն  
 զբուածքի ամբողջութեան մէջ հաստատարակչու-  
 թիւնը պակաս է. աեղ աեղ հեղինակը մանրամաս-  
 նութեանց կարելի է աւել շտիկց աւելի ման-  
 րամասն հաշիւներն մէջ է մանում, ուրիշ աեղեր  
 պատմութեան ամբողջ երկները բաց են մնում:

Այսպէս արամադրում են բնականաբար նորան  
 իւր ձեւքում եղած փոստաթղթերը. բայց թող  
 ներսի մեկ նիւթաւոր սր նա սչ ի նպատակ զսրժի  
 կամենում է մի կողմից անպատճառ. բայց իւր  
 ունեցածները առ ի ինայում է երբեմն յեա  
 պահէ այն ինչ որ երկրորդական է երրորդական  
 նշանակալ թիւն ունի (անում է նաև կրթութիւն-  
 ներ), միւս կողմից բնականաբար է իւր ու-  
 նեցածով և աւելի հեռաւոր պարիսրներն չի զի-  
 մում իւր պատմութեան ամբողջութիւն տալու  
 համար: Մենք կարծում ենք թէ սրբայիտի ազ-  
 րիւններ շատ կարելի էր գտնել և պ. Երիցեանի  
 պէս մի հմուտ գրող կարող կրկնէր ներսիսեան  
 զպ. ի կամ որ դրեթէ նայն է՝ մեր գարու Հայոց  
 կրթական զոցծի զարգացման աւելի լիւս պատ-  
 մութիւն բնծայել, եթէ պակաս հարցնեցով յա-  
 ռաջ տանէր իւր աշխատութիւնը: Այնուամենայ-  
 նիւ նորա զբուածքը մի շատ հեռաբերական և  
 բազմաբովանդակ երես է այդ պատմութեան  
 որ պատիւ է բերում թէ իրեն հեղինակին և թէ  
 հրատարակութեան մասին հոգացող ներսիսեան  
 զպրոցի հոգարարութեան և շատ բան է ու-  
 սուցանում բնթերցողին:

Կ. Վ.



ՅԱՆՆԱԿԱՆ ԵՐԵՐՏԻ 1898 Թ. ՆՈՅԵՄԲԵՐ Ե ԳԵԿՏԵՄԲԵՐ.

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՏԻՍՈՒԹԵԱՆ ՀՆՏՐԵՐ ՄԻՋՆԵՐԿՐԵԱՆ ՏԱՂԵՐԱՆՆԵՐԻՑ.

Մեր բանահատարները մինչև այժմ աշխա-  
 տել են անպիւր բանահիտութեան նշխարներ ժո-  
 ղովել, բայց շատ քիչ ու շաղքութիւն են զարժրել  
 ժողովրդական բանահիտութեան այն մնացորդ-  
 ների վերայ, որ հառ ու կտոր զբուած են միջնա-  
 դարեան հեղինակները զբուածքներէ մէջ: Սա-  
 կայն նորութիւն չէ որ Փ. զարկից սկսած մենք  
 ժողովրդական բանահիտութեան մնացորդներ  
 կարող ենք գտնել նախնեաց ձեռագրերն մէջ:  
 Գրիգոր Նարեկացին իւր ապերով և դանձրով,  
 Մաղխաբոս, Միթիար Գոշ, Շնորհալին, Վար-  
 դան և մանաւանդ միջնադարեան երգիչները  
 արժանի են առանձին ու շաղքութեան ժողովրդ-  
 ական բանահիտութեան աեռակէտով ժողո-  
 վրդի վարք ու բարքի սովորութիւններն, սնա-  
 ւիապաշտութեան ուսումնասիրութեան համար  
 բնակր աղբիւրներ են նաև մինչև այժմ բոլո-  
 րովին անտես արուած բարոյները: Աւելշ ազ-  
 դերի մատենագրութեան մէջ ևս հազուադիւս

չեն նման երեոյթներ. Ֆրանսիացուոց Կոլմեզի  
 երգը, Գերմանացոց նիւրեւոնդները, Պարսից  
 Շահամէն ժողովրդական վէպէր են, որ յեառ  
 գրի են աւանդել և մշակուել բանաստեղծներն  
 ձեռքով: Զարմանալի չէ որ բեմն է թէ ժողովրդ-  
 ական ներկայ բանահիտութեան հեաքեր սր-  
 ներ միջնադարեան տաղարանների մէջ:  
 Միջնադարեան երգիչներն բնդհանրապէս  
 ժողովրդական ողով և լեզուով են հիւսում իրենց  
 երգերը. նորա ժողովրդի մարդիկ են, նոյն գա-  
 զափարներով և զգացումներով սնուած, ինչպէս  
 հասարակ ժողովուրդը: Պարսն Ա. Կոստանեանց  
 իւր ժողովածուներով և յոռաջարաններով մատ-  
 նացոյց է արել նոցա այդ յաակալ թիւնը: Ներկայ  
 տղերով մեր նպատակը չէ վերջելաւ բնդհա-  
 նուր առնչութիւնների մասին խօսել, այլ մի եր-  
 կու օրինակով ցոյց աալ թէ ժողովրդական բա-  
 նահիտութեան հեաքեր, փոխառութիւններ ևս  
 կան միջնադարեան երգերի մէջ: Ի՞նչ են օրինակ



Գանձարանները՝ հոգևոր երգեր և ողբեր, որոնք յառաջ են եկել ժողովրդի իւր ննջեցեալները կածելու սովորու թիւնից: Հայաստանի շատ անկիւններում գեւ ևս կենդանի է այն սովորութիւնը, որ ննջեցեալի արդարանները յառաջապէս կանաչք երգելով կոծում են իրենց սիրելու մահը տարաբարբար շատ քիչ նիւթ է հաւարում Բանասիրտութեան այս աեսակից, այստեղ թէ ոչ կարելի էր համեմատել, թէ ժողովրդականը ի՞նչ աւանշութիւն ունի Գանձարանների ողբերի հետ:

Ի՞նչ են աւետիաները: Գարձեալ ժողովրդի սովորութեան հետ կապում հոգևոր երգեր Քրիստոսի ծննդեան մասին, երբեմն նայն խոյ ըստանդակութեամբ և աւանդութիւններով շատ մտա ժողովրդական նման երգերն: Փոքրուրդն էլ ունի իւր աւետիաները: Կոհացիք և ուրիշ գա-

ւառների պատանիններ սովորութիւն ունին ծննդեան զիշերը երգելից երգելի անցնելով, աւետիան երգել և միւր ժողովել: Վարաբարգամ ևս կենդանի է այդ սովորութիւնը: Չանդեզուրի տիրացուները մինչև խոյ հարեան դատողեքն են գնում ծննդեան առնելին աւետիս մանկալու: Տարաբանները աւետիաները իրենց զբոսան երգեր տարբեր են ժողովրդականից իրենց ամբողջութեամբ, բայց կապում թեան և ըստանդակութեան նմանութիւններ ևս ունին: Ի՞նչ զբոսան և թէ ժողովրդական աւետիաները ա) պատմում կամ գրում առում են Քրիստոսի ծնունդը և միտում թիւնը, բ) որհնում են մտած առնը և ընտանիքը, գ) նու էրներ են ու գում: Ապացուցութեան համար Պ. Կոստանեանցի \* հրատարակած Աւետիաներից մէ քանի հատում համեմատներ ժողովրդականի հետ:

Գրական

Օրհնեալ է սուրբ կոյսն ի յայրին աւետիս. ծնու երեր զՅիսուս որդին  
 Ի Խանձարուրն պատեցին,  
 Ի յանբանից մտուր կզին.  
 Դեա Յորդանան մկրտեցին.  
 Ի Յոհաննու զիրկն զրին:  
 Զանուն Յիսուս Տէր օրհնեցին  
 Եր. 16.

Ի Յիսուսէ Բրիստոսէ. .  
 Օրհնած է տանս տանուտերն. .  
 Ի Սառայէ ի մարթայէ. .  
 Օրհնած է տանս տանախկին. .  
 Ի Պետրոսէ ի Պօղոսէ. .  
 Օրհնած է տանս տարկներն. .  
 Եր. 17.

Ատուած գայս տունս շէն պոհէ. .  
 Թոյ ձեր սեղանն բոլորի  
 Կթխան ի մէջ գիւտով իլի:  
 Եր. 12.

Խաթուն մարիկ, արի ի վեր, .  
 Ի թանտրեկերն մի ննջեր. .

Ա. Ժողովրդական. \*\*

Մարիամ կինաց տեոն ի յերին, ալլուիտ  
 Ծնկնիր էառ մարմար քեարին. .  
 Մեկնա իպի Բրիստոս որդին. .  
 Ինի քի, բիրթ խանձարուր. .  
 Բրիստոս մեանչ քի փաթըթիցին. .  
 Ինի քի սուրբ Յեովանէս. .  
 Բրիստոսին քաւոր արին. .  
 Ինի քի զիա Յորդորէն. .  
 Բրիստոս մեանչ քի մկրտեցին. .

Բ.

Էս տուն շինըցին դեարնան շէնգեով. .  
 Մեկր յինի ծառն է ինդին. .  
 Թանիր յինի քեանց կզեկածին.  
 Խարանիր պիլիւր քեանց էգընին.  
 Զիր լաճի անունն ի՞նչ ի.  
 (Այս անուն) նախ ծառի ճէքին,  
 Սս փրէն յրոջիւ խաղար բարին. .  
 Կթխէն ը ձեռ նունն զինի:

Գ.

Մանչ, Մանչ, ալլու էլի սովիւ խաղի, որ  
 Ֆոֆոսյ

\* Կոստանեանցի. Ա. Պրակ. Միլեոպոլիսի Հայոց տպարանի և Կոստանեանցի Բիթլիս 1892:  
 \*\* Փրակեանցի ժողովրդական քանակի տարեան ժողովրդի Կոհացի Մարի. Յոհաննան. Թիլիս, 1892. Եր. 23. Կամ. Կոստ. Մեղրեան. Քնար Մեղրեան և Կանեցոյ, Վաղարշապատ, 1874 Եր. 5:



Արի գնա յանկիւնն ի վեր .  
Գերգիր դաժաւ և չոր միս բեր .  
եր. 13.

Արի մամուկ, հաւու միս բեր .  
Չուածեղինն մի մտանար .  
Մեր բնկերաց փարչ մի գինի .  
Իմ ձայնակցաց խաչքաղանի .  
եր. 23-24.

Մենք յեռեցինք թէ Տաղարաններն և ժողովրդական ասանդութիւններն մէջ ևս նմանութիւններ կան. Օրինակ մտքերի երկրպագութեան ասանդութիւնը (Առտ. եր. 9.) Գասպար թագաւորն զերեզմանն աղը Մոկաց գաւառում (Առտ. 26) համ. «Փշրանքներ» 32-34 եր. Յիսուսի ներկարարութեան (Առտ. 21 եր.) Պաշտան ծաղկի ծաղման ասանդութիւնները (Առտ. 18 եր.) մինչև այսօր էլ կենդանի են ժողովրդի բերանում, թէև փոքր ինչ տարբեր կազմութեամբ:

Այս հրատարակումը նիւթերից զատ Տաղարաններն մէջ կան և անտիպ երգեր, որոնց նման վարիանները այսօր էլ երգում են Մոկացիք: Մենք հրատարակում ենք նոցանից մի քանիսը յուսալով որ ժողովրդական բանահիտութեամբ զբաղուող և հետաքրքրուող անձինք աւելի հետամուտ կլինեն այս խնդրի ուսումնասիրութեան:

Երգերից առաջինը նարեկացու գովքն է, որ մենք արտագրել ենք Մայր Աթոռի մատենադարանի № 283 (Գ. կաթ.) ձեռագրից: Հեղինակը Յովհաննէս Թլիսուբանցին է, միջնադարեան նշանաւոր երգիչներից մէկը, որ 1489-1525 թ. Սսի կաթողիկոսական աթոռը բարձրացաւ: \* Ինչպէս յեռեցինք այս գովքն մի վարիանաբ երգում են այժմ Մոկացիք: \*\* Թլիսուբանցու երգի և ժողովրդականի նմանութիւնը ակնբեր է մանաւանդ այն մասի մէջ, ուր նկարագրուած են Սսի վարդապետների գալուտար և աղանինների ասանդութիւնը: Բայց Թլիսուբանցու երգի մէջ ուրիշ նշաններ ևս կան, որից մակարերել կարելի է, թէ նորան յայտնի էր ժողովրդական ասանդութիւնը կամ երգը իւր ամբողջութեամբ: Թլիսուբանցուն ևս յայտնի է նարեկացու հալուսութիւնը: Այս նմանութիւնները պատահական լինել չեն կարող. Չենք կարող ասել նուեւ թէ Մոկացիները Թլիսուբանցու երգի ազդեցութեամբ են հիւսել իրենց երգը. ժողովրդականի ամբողջութեան տարբեր կազմութիւնը ապացոյց է նորա անկախութեան: Մնում է ընդունել, թէ Թլիսուբանցին է

Լաշին թըլ որ սրտայ .  
Թըլ զաջ ասն ի բարին .  
Կինա մտանի ախս բաց, որ ձովոայ .  
Մայրմ կեքքով մէկ չիբ պի, որ խախոայ .

օգտուել ժողովրդական ասանդութիւններից, դուրս ելնալ հէնց երգերից:

Երկրորդը «Տաղ աղնի և զեղեցիկ երկնուց և զեանուց ասացեալ» վերնագրով, արտագրել ենք № 283 (Գ. կաթ.) ձեռագրից. երկրորդ ընդօրինակութիւն ևս կայ նոյն ձեռագրի մէջ ասանդ որ և է կարևոր տարբերութեան: Այս տաղն ևս երգում են Մոկացիք, ինչպէս յայտնել է մեզ Աւլան աղի, նարեկացու և միւս ժողովրդական երգերի թեւազբոյց Մոկացի Յեովանք\* . Տարբարդաբար ինքն անգիր չցիւտէր, թէև յաճախ լսել էր այդ երգն իւր հոգեւններում: Ընթերցողը նկատել կարող է, որ այս տաղը ժողովրդական ոգով է գրուած, թէև կազմութիւնն աւելի գրական է: Ինչու չենթագրել, որ երգիչն իւր նիւթը ժողովրդից է առել և մշակել, ինչպէս Թլիսուբանցին արել է նարեկացու երգի վերաբերութեամբ: Եթէ Մոկացիներից երգուածը զրի առնուած լինէր, աւելի որոշ կարելի էր խօսել այս երգի գրական և ժողովրդական եղանակաւորութիւնների մասին:

Երրորդը «Տաղ Սողոմոնի ասացեալ» մենք արտագրել ենք Մայր ցուցակի № 1998, տաղարանից և համեմատել ենք նոյն ցուցակի № 1999 ձեռագրի հետ: Այս տաղը ժողովրդական նման մի երգի հատուածն է կազմում,\*\* թէև մշակողը Աղամի անունն էլ խառնել և գրական ձև է առել: Գուցէ կյաջողութի մեղ ժողովրդական երգի միս հատուածներն էլ գտնել ձեռագիրների մէջ, Սահայն մեր ունեցածն էլ բաւական է երկուսի առընչութիւնը ցոյց տալու համար, ոչ միայն բովանդակութեան, այլ մինչև իսկ արտայայտութեան նմանութիւններ կան երկուսի մէջ: Ժողովրդականը այնքան զեղեցիկ է, որ ժողովրդական բանաստեղծութեան ամենատիրուն կողմներից մէկը կարելի է համարել, Երկու երգերի իմաստն էլ նոյն է, ցոյց տալ երկրայինի անցաւորութիւնը և աստուածաբաշտութեան, կրօնական բարեաց յախանական նշանակութիւնը:

Չորրորդ տաղը կիւրակէի մասին. Ասանաւորս ի վերայ կիւրակէի ասացեալ Առարել վարդապետէ - որ մենք աւել ենք Գէորգեան ցուցակի

\* Կ. Կոստանեակց. Յովհաննէս Թլիսուբանցին և իւր օպերը, Թիֆլիզ, 1892 եր. 5:

\*\* Փշրանքներ. եր. 16-19:

\* Փշրանքներ եր. 3, 16, 21-29:

\*\* Փշրանքներ եր. 21:



№ 181 մեռազրկից: Տաղարանները մէջ յաճախ կրկնուում է Առարկէ վարդապետի անունը: Պ. Կոստանեանց «Տաղ վասն Մահրամայի» տառնաւորը հեղինակը ենթադրութեամբ նսնայնում է Առարկէ պատմազրկ հետ: Կիւրակէի տաղը բանաստեղծական կողմից թոյլ է, բայց հետաքրքրական է համեմատել ժողովրդական մեկերդի հետ: որ կիւրակէին է նուիրուած և ուսուցին անգամն ենք հրատարակում: Ընթեցրողը հեշտութեամբ նկատել կարող է երկուսի մէջ եղած մտքերը և գործուածները նմանութիւնները, ժողովրդականի մէջ պակասում են այն մասերը որ գրականի մէջ հին կտակարանի հետ են կապուած:

Ժողովրդական բանահիւսութեան հետ մեծ առնչութիւն ունին անշուշտ և տաղարանների մէջ պատահած առակները (ՃԱՇԻՅ): Բանահիւսութեան այս տեսակը տարբարազարար մեր բանահաւաքները կողմից առանձին ուշադրութեան չէ արժանացել: այն ինչ բանահիւսութեան կարևոր մասերից մէկն է և ժողովրդական առակախօսութիւնը: Մեր ժողովրդի մէջ գործածուող առակներից կարելի է մի ստուար հասար կազմել, որից ապագայ հայ Կուրակը Փոշ Մխիթարի և Վարդանի առակների հետ հարուստ ներթ կունենար ձեռքի տակ: Հայոց ժողովրդական առակների մէջ զայլը արջը, աղու էտը, արծիւը, ագաւաւը, կաքաւը սիրելի պատկերներ են մարդկանց բնատուրութիւնը նկարագրելու կամ բարոյական որ և է խրատ արտայայտելու համար: Տաղարանների մէջ չէ պակասում և ժողովրդական բանահիւսութեան այս տեսակը: Պ. Կոստանեանց իւր Բ. պրակի մէջ հրատարակել է երկուսը էր. 30-33. հրատարակուածներից զատ տաղարաններում տեսել ենք և մի ուրիշը, որ աղու աղում օրինակի պատճառով առ այժմ չենք հրատարակում, մինչև լուսագոյն օրինակ կգտնենք:

Մենք կարող էինք գործնաւ ուրիշ օրինակներ բերել. բայց կարծում ենք այսքանն էլ բաւական էր ցոյց տալ թէ տաղարանները արժանի են առանձին ուսումնասիրութեան և ժողովրդական բանահիւսութեան տեսակետով:

Ա.

- Գեղ մրն կայր Ծարեկ կասն,
- Իւր աթոռն էր վարդապետին.
- Անգ ըր տանուակը մի կայր,
- Իւր անտնըն Գորգիկ ձայնին:
- Ապրել էր հարիւր տարի,
- Չեր եկել ի ժամոյ տեղի.
- Վարդապետ ինդիր խրկեց,
- Ե՛ր չես գար ի ժամանակի:

- Մայ հանց պատասխան երևա.
- «Շատ մշակ ունիմ չի բանիր»:
- Վարդապետ անէ՞ք էս՞.
- «Չի հանդի մարմնից ի հոյի»:
- Երեկ բոլորեց տարին,
- Գորգ մեռաւ ի մէջ զիշերին.
- Չորս մարդ ի յուսին գրին.
- Ու տարան եղերն ի հոյին,
- Եօթն օր գերեզման բացին,
- Հողըն մուտ չերևա Գորգիկին.
- Երկթէ աւզեր արին,
- Իւր ոտից կոծերն անցուցին:
- Երեք օր երեք զիշեր
- Կախեցին ի պատն սրեզին.
- Ահա հոտեցաւ մարմին,
- Գորգ անգաւ ի մէջ փողոցին:
- Ոչ շուն իւր միսն ուտէր,
- Ոչ թռչունք վերաքն անցանէր.
- Շատ մարդ շատ աղլու՛նք ունէր,
- Մտքա այլ թէ կար արարին,
- Ելան միաբան զնային,
- Ոտն անկան սուրբ վարդապետին:
- Վարդապետ յառաջ երեկ
- Ու յիշեց զԱստուած կենդանին
- Ի վերայ դաւազանին կանգնու.
- Ու հարցումն երևա մեռելին.
- «Թե՛ ս՛նց ժրմեցար ով Գորգ
- Որ յեկիր ի յեղեր հոյին»:
- Գորգիկ զգուցին վեր վերուց,
- Ոտն անկաւ սուրբ վարդապետին.
- «Տէ՛ր, ինձ թողու թիւն արա
- Չիս մոլար ճանիօվ կու տանին:
- Մայ զաչն ի վերա եհան.
- «Գորգ, հանդիր ի մէջ ի հոյին»
- Չարկես քեզ հր ման ով ապ
- Որ դատիս ի յար կիրակին»:
- Համբաւն այլ ի Սիս հասաւ,
- Սքանկիլք սուրբ վարդապետին.
- Մարեկ վարդապետ մի կայ
- Որ կուտայ մեռածին հոգի:
- Երեք վարդապետ Սըսի
- Երեքեանն ի Սիս քողաքէն,
- Ելան ճանապարհ անկան,
- Վարդապետին ի անս կու գային:
- Եկին դէմ յիրար առին,
- Կարածէր ոչխարն ի սարին.



Բիչ մի գիշառես եր նայ  
 Մէկ ի մէկ հայինս ծիծաղինս  
 Հօգով սուրբ եր Ծարեհայցին  
 Իմացաւ զխորհուրդն ի սրտին.  
 «Իմ տեր, թողութիւն արեք.  
 Աշտեհերան եմ վարդապետին»:  
 Եւ իմն գայլ սարին նատեր  
 Ու այլազգ կին ոչխարին.  
 Մայ զգայլերն ի վայր ձենեց  
 Ու հովիւ եղեր ոչխարին:  
 Զերեքաց զաւազան էաւ,  
 Դեմ իւրն խուցըն զընացին.  
 Եւ երեք աղանի բանեց.  
 Օրըն պաք էր չորեքշաբթին:  
 Սարգեց եւ խորովեց ի ազխոր  
 Եւ եղիր առջև հիւրերուն.  
 «Հրամեցէք բարի հիւրեր  
 Ծառակեմք ի այս սեղանոյս»:  
 Մոքս մէկ ի մէկ հայէին  
 Եւ մատըն զրին պըռընկին.  
 «Իմ տեր, թողութիւն արաւ,  
 Օրս պաք է չորեքշաբթին»:  
 «Կամ կերէք բարի հիւրեր,  
 Կամ հրաման արեք որ թաշին»:  
 Երեք վարդապետ Սըսցի  
 Այն խօսիցն ի վայր մնացին:  
 Վարդապետն յառաջ երեկ  
 Ու յիշեց զԱստուած կենդանին  
 Մա խաչն ի վայ (?) եհան  
 Թեւաթափ հաուր թեփուրին:  
 Թեւ առին եօթնապատիկ  
 Վերայ զլսն սուրբ վարդապետին.  
 Վարդապետն աւրհանեց զնա  
 Ու թռան հասան երամին:  
 Երեք վարդապետ Սըսցի  
 Յոան անկան սուրբ վարդապետին,  
 Ասին. «կ'ամենաս զու տեր,  
 Որք հազարք զքեզ գովէին»:  
 Երթամք ի խաղար աանեմք  
 Աւ Սաս կաթնոլիկոսին.  
 Ծշմարիտ բղորդ կասեն,  
 Որ կուտայ մեռածին հոգի»:  
 Բաներս յովանեմն ասաց,  
 Եովանեմն այլ թուրբութանցին  
 Բանիս իմ ակամջ գնէ,  
 Եւր մեղացն առնէր թողութիւն:

Բ.

Տաղ ազնիւ եւ գեղեցիկ երկնաց եւ գեանաց  
 ասացեալ:  
 Երկինք ու գեանք եզրայրք  
 Աճէփ որ քան զսրն աւելի,  
 Զերկնից բարձրութիւնն ասեմ,  
 Մա գեանին պատգու աւելի:  
 Երկինքն ի գեանին ասաց.  
 «Բան ունիմ քանց զքեզ աւելի,  
 Զպայծառագուն աստղուերս  
 Ամէն իմ կողմէս կուլինի»:  
 Գեանն երկնուցն ասաց.  
 «Աստուծոյ մունեթն աւելի,  
 Վեց հազարապուն ծաղկուերս  
 Ամէն իմ կողմէս կուլինի»:  
 Երկինքն գեանին ասաց.  
 «Բան ունիմ քանց քեզ աւելի,  
 Իմ ցօղն ի քէնէ կրարեմ,  
 Բո ծաղկուերս որով զարդարի»:  
 Գեանն երկնուցն ասաց.  
 «Աստուծոյ մունեթն աւելի,  
 Դու ցօղն է՛ի ծովէն կասնուս,  
 Ծովուն ակն յիանէ կուլինի,  
 Զիմ ակն որ ի յիս քաշեմ,  
 Մա քո ցօղն ուսկից կուլինի»:  
 Երկինքըն գեանին ասաց.  
 «Բան ունիմ քանց քեզ աւելի,  
 Պարզեմ բարկ արե զիպմեմ,  
 Բո ծաղկուերս ամէն իրջըրի»:  
 Գեանն երկնուցն ասաց.  
 «Աստուծոյ մունեթն աւելի,  
 Զուրն ի յանդնոց հանեմ,  
 Որ ծաղկուերս ամէն զարդարի»:  
 Երկինքըն գեանին ասաց.  
 «Բան ունիմ քանց քեզ աւելի,  
 Կայծակ ու կարկուտ անեմ,  
 Բո ծաղկուերս ամէն խարանի»:  
 Գեանն երկնուցն ասաց.  
 «Աստուծոյ մունեթն աւելի,  
 Անչափ ձոր է՛ստու ունիմ,  
 Բո կարկուտըն տի մէջըն լըցուի.  
 Կարկուտըն հեղեղ կապի,  
 Ի ծովերդ ի վայր վըտարի.  
 Դատնամ ամեղ կրկին կուտամ,  
 Որ ծաղկուերս ամէն քամայի»:



Երկինքն զհանին ասաց,  
 «Բան ունիմ՝ քանց քեզ աւելի»  
 Ուր աղէկ կրարի՞մ մ'որ կայ,  
 կայ ի քո ներքե զընտանի»:

Գեանն երկրնուցն ասաց,  
 «Աստուծոյ մուննէլին աւելի»  
 Աստուած իր տուած հոգին  
 Թէ կաննի նա ինչ աի լինի  
 Թէ մարմինն ի յիս շուննիմ  
 Մայ աշխարհ հոտուն անցանի,  
 Հրեշտակ ի հոտուն փախչինե  
 Երկինքն ու զհանիք տաաանի»:

Երկինքն ու զհանին ասաց,  
 «Բան ունիմ՝ քանց քեզ աւելի»  
 Ինն դաս հրեշտակն սր կան,  
 Ամէնն իմ կողմէս կուլինի»:

Գեանն երկրնուցն ասաց,  
 «Աստուծոյ մուննէլին աւելի»  
 Սուրբ առարեալք՝ մարգարէք,  
 Ամէնն իմ կողմէս կուլինի»:

Երկինքն ի զհանին ասաց,  
 «Բան ունիմ՝ քանց քեզ աւելի»  
 Եաւթն տակ երկինքն եմ ես,  
 Որ արեւ լուսին կու ելնի.  
 Արեւ և լուսինս՝ աստղունք,  
 Ամէնն իմ կողմէս կուլինի.  
 Ստեղծոյ Արարիչն Աստուած  
 Աթոռով վրաս կու բազմի»:

Գեանն երկրնուցն ասաց,  
 «Աստուծոյ մուննէլին աւելի»  
 Եաւթն տակ երկինքն ասեմ,  
 Ան ամէնն ի վայր աի թափի,  
 Արեւ և լուսինս աստղունքն  
 Որ երթանն ի հեա խաարին».

Եւ քո արարիչն Աստուած  
 Աթոռով աշխարհքս աի իջնի,  
 Գառաատան զհանն աի լինի»:

Ազա ցածացաւ երկինքն,  
 Ու զլուխ եղիր ի զհանի.  
 «Բան մեր կուգան դաւարի»  
 Զանի քո սիրան մի տանիր»  
 Դու հիմն ես եկեղեցի,  
 Գերեզման սուրբ՝ վարդապետի.  
 Դու խուռեկ ես բուրգաւ լիլի,  
 Օրէնք քո վերայ հաստատի»:

Մանկունք՝ դուք ամափղ արեք  
 Այգ ամափ դու զարմանալի:  
 Դուք այլ ցնծացէք, մանկաբի,  
 Ու զլուխ զրէք ի զհանի:  
 Բան զերկինքն ինչ բարձր կայ,  
 Որ զլուխ եղիր ի զհանի.  
 Այսօր վրան կու քայլներ,  
 Վազն մանունք ի ներքե զհանի:

Գ.

Յաստրվարս ով<sup>1</sup> շինեաց իւր տուն  
 Կամ հանգչաւ սրտովն<sup>2</sup> ի վերայ  
 Կամ ով եղեր<sup>3</sup> քար վերայ քարի,  
 Որ<sup>4</sup> յաւիտեան երթայ մընայ:  
 Մա Սողոմոն տաճար շինեաց<sup>5</sup>  
 Եւ ճեփեաց զոսկին ի վերայ,  
 Մա<sup>6</sup> զդռներն<sup>7</sup> ապիկի զրեց<sup>8</sup>  
 Եւ եհան լաճվարդն<sup>9</sup> ի վերայ:

Ի մէջն<sup>10</sup> եղիր օսկի աթոռ.  
 Եւ նստաւ թագարն ի վերայ,  
 Մա յԱստուծոյ<sup>11</sup> դմար երեկ,<sup>12</sup>  
 Հահառակ մտաւ ստանայ:

Մէկ մի ձիով<sup>15</sup> չափար երեկ,  
 Կանգնաւ առջե Սողոմոնի,  
 Թէ զշոյ հարաւայ երկր  
 Եւ ի տաճարը<sup>14</sup> տես կուգայ,  
 Ծառ մալ, շառ դանձ կայ հեա նորաւ,  
 Բազում հեծել ճորա ու<sup>15</sup> ծառայ.  
 Զտաճարապետն իլաթեց,<sup>16</sup>  
 Մտաւ ի մէջն,<sup>17</sup> ի շուրջ կուգայ:

Սողոմոն նմա ցանկացաւ.  
 Եւ զլուս թագարն վերացաւ,<sup>18</sup>  
 Ողորմելի ի դուրս կլաւ,  
 Յիշեաց զրանն Ազամայ:

Թէ երանի է քեզ Ազամ,  
 Բեղի համար մեր Տերն զայ,<sup>19</sup>  
 Դայ ի կուսնն մարմնն աանաւ,  
 Եւ ի յայրին<sup>21</sup> ճնեալ<sup>21</sup> աղայ: \*

1. Աստուծոյ ով. 2. սրտով. 3. կամ եղ քար ի վերայ.  
 4. քե.  
 5. շինեց. 6.—. 7. գրեւեմի. 8. եղիւ. 9. զլաճ-  
 վարն. 10. ի մէջն. 11. Աստուծոյ. 12. երեկով. 13.  
 միջով. 14. ի տաճարն ի յեր. 15. եւ. 16. խաւարեաց.  
 17. ի ներս. 18. վերացաւ քաղի գիտայ նուա 19. Քեզի  
 կուսար Տերն կուգայ. 20. ի այրի. 21. ճնեալի.  
 \* Այս անկց յետայ Ա՝ 1999 ձեռագրել ՃԳՐ



Մեքոն Գառապար և Պաղտասար  
 Երկրպագողք նորա<sup>22</sup> դան,  
 Ահա և կին յերուսաղեմ<sup>25</sup>  
 Եւ զուշակէ<sup>24</sup> ասայն նոցա  
 Թէ Երանի է քեզ Աբամ,\*  
 Բեզի համար մեր Տէրն գայ.  
 Զփոսթ ի բարձունս հնչէին  
 Ժողովրդեանն որ կայ

Պ.

Ոտանաւորս ի վերայ կիրակէի ասացեալ  
 Առարել վարդապետէ:

Տէրն է զրեալ աւրէնքն հին  
 Մատաւրն սուրբ Աստուածային.  
 Թէ պահէ ըզկիրակին  
 Եւ մի գործեր գործ ինչ նմին:  
 Եթէ պահէք ըզկիրակին,  
 Հաւաւ՝ անդաստանքներ բազմացին,  
 Թէ հակառակ կենայք նրմին,  
 Ամէն բարիք մեր խափանին:  
 Բամեալ ազանց ազգ մարդկային  
 Ամէն ունին ըզկիրակին.  
 Ուրբաթ տաճկին շարաթ ջհաթին,  
 Հինգշաբթի աւր կռապաշտին  
 Ազգըն հրէից աւրէն զրնին,  
 Հանց պինտ պահեն ըզկիրակին,  
 Որ թէ սպաննէ զնայ թշնամին,  
 Մա մեք ի վեր չրերէ նրմին:  
 Ռամիկ մարդիկ Հայոց ազգին,  
 Որ ոչ պահէք ըզկիրակին,  
 Ոչ էք նրման զուք կռապաշտին  
 Եւ ոչ տաճկին և ոչ ճհաթին  
 Այս աւրէնք քրիստոնէին,  
 Աւել չաճել ի կիրակին,  
 Այլ պարապել ժամատեղին,  
 Ականջ զնել քահանային:

հետեւեալ քառասայն է դալիս որ միտի մէջ  
 չկայ. նա Սիմէօն ի զերկն աւնու,  
 Իւր ձեր ալեօքն զըզվէ,  
 Նա և թաղաւորք մուսուլման գան,  
 Ար երեքն անունքն կայ  
 22. նա կուգան. 23 երուսաղեմ.  
 24. եւ զաշակեաց.  
 \* Այս վերջին տունը չկայ № 1999 ձեռա-  
 գրեմ մէջ:

Քահանայք զուք որ յաշխարհի  
 Երես սխան էք Բրիստոսի,  
 Թէ ժողովուրդն անաւրինի,  
 Արիւն նոցա ի ձէնջ խնդրի:  
 Երթ խրատեա զամենեւեան,  
 Որ պինդ պահեն ըզկիրակին,  
 Թէ չսեն բանից քային,  
 Գու մի երթար ի տունս նոցին:  
 Ասա նոցա զաւրէնքն յայանի,  
 Որ ահն ի սիրա նորա անկցի,  
 Մա անաստուած էւ՝ անհօգի:  
 Ով չի պահէ ըզկիրակին,  
 Հսել զաւրէնք հրէից ազգին  
 Մակարայեան նահատակին,  
 Որ Անտիոք խոզն անատին,  
 Թէ զինչ գործեաց հրէից ազգին:  
 Սուսեր առեալ կատորեցին  
 Զբոլոր մարդիք հրէից ազգին,  
 Մոքա մեք վեր չրերէին,  
 Թէ կու պահեմք ըզկիրակին:  
 Իսկ որ չպահէ ըզկիրակին,  
 Մալաթ լինի ջհուա ազգին,  
 Որ ոչ պահէ ըզկիրակին,  
 Թողու զաւրէնսն Բրիստոսին:  
 Ի՞նչ Աստուած չունի է՝ ամենեւին,  
 Ով չի պահէ ըզկիրակին,  
 Եւ կամ չերթայ ժամատեղին,  
 Քան ըզջհուան այլ պիղծ կոչին,  
 Եզուկ ու վայ է այն մարդուն,  
 Ով չի պահէ ըզկիրակին,  
 Ոչ թուրք, ոչ հայ է այնպիսին,  
 Այլ անաստուած բոլորովին:  
 Ազգն հրէից աւրէնքն հին  
 Ծառ կիրակիք կու պահէին.  
 Ըզեթմ աւուրն ըզմինն աւրին,  
 Ըզմէկ շափթուն զշարաթըն մին,  
 Ըզեթմ ամսուն ըզմէկ ամսին,  
 Զեթմըն տարուն ըզմէկ տարին,  
 Զեզ եաւթ աւուրն մին կիրակին,  
 Զայն այլ չպահէք բոլորովին:  
 Գու տես ըզ սեր հրէից ազգին,  
 Կին մի չպահեց ըզկիրակին,  
 Կիրակ վառեց վասն ցրտին,  
 Ամէնքն զնա քարկոծեցին:  
 Սա բոց վառեաց վասն ցրտին,  
 Մեծ մահ անկաւ ամէն ազգին,



Մինչ որ դայն կին քարկածեցին,  
Ապա եթող մահն ըզնոսին:  
Թե կրակ արար անտի մի կին,  
Տէր բարկացաւ բորբ ազգին:  
Որ չի պահէ ըզկիրակին,  
Բարկոճեւոյ է այնպիսին:  
Չայս աւրինակ զբէք անձին:  
Պինա պահեցէք ըզկիրակին,  
Չի բարկու թիւնն սատուածային  
Չի սատակէ զամենեւին:  
Տիտէք զԱզամ հայր մեր նախնին,  
Որ չի բեց պատուիրանին:  
Չհազար ամ չարչարեցին,  
Սոյնպէս և դուք: ով լարագին:  
Թե չի պահէք ըզկիրակին,  
Պիտպէս պատիժ ձեզ հասանին,  
Յայս կեանքս և յար զատատանին,  
Բարկու թիւն մեծ գայցէ նոցին:  
Ով չի պահէ ըզկիրակին,  
Դուստր և սրգիք իւր կոտորին,  
Հաւք է՝ անգաստանք պատու հասին,  
Եւ պարտական հրոյ լինին:  
Սոյն Տէրն ասաց աւրէնքն հին,  
Թե չի պահէք զկիրակին,  
Ես ըզ ասրին բոլորովին  
Չեզ կիրակի ասնեմ կրկին:  
Բրիտոս խաչեալ վասն քոյին  
Եւ աւերեաց զգրժոխքն հին:  
Դու չի պահելով զկիրակին,  
Էեզ նոր զբժոխք շինես կրկին:  
Ով չի պահէ ըզկիրակին,  
Շատ բարկու թիւն զանձէ անձին,  
Վասն զործոյ կիրակիին,  
Դայ պէս պէս ցաւք անգաստանին:  
Կարկուտ մորիս է՝ երաշտութիւն:  
Ջորեակի զպուկ և ժանկ հայցին,  
Անանոց ցաւք: որ կոտորին:  
Մահ ասրածամ: մարացկութիւն:  
Ահ և փախուստ և խոտովութիւն:  
Սասանութիւն և շարժ երկրի,  
Թաքան: առգանք է՝ աւերութիւն  
Հեղեղք հոլով և սպանութիւն:  
Լպումն ողբումն և ցաւ անձին  
Ատ և յայն կեանքն լինիցին,  
Որք ոչ պահեն ըզկիրակին,  
Կրակով անձինք նոցա այրին:  
Պարպ կացիք ի կիրակին,  
Գնա ի ժամ եկեղեցին,  
Լսէ զքարոզ քահանային,  
Խոստովանես զանցանս քոյին:

Ժողովրդական.

Վով կիրակին կերթայ ջազայ,  
Կի կեայ կտեսնայ որդին թագած.  
Վով կիրակին էրան կենը,  
Ուր մաքըն մէջ սերան կենը,  
Տաս կցանը: մէկ կխանը,  
Չար թշնամին ուրախ կրնը,  
Վով կիրակին ճամբախ քէլը,  
Ինչքան քէլից: տեղ շխանը,  
Չար թշնամուն խարար կենը,  
Ուր սրախ մարագին շխանը:  
Վով կիրակին ցարին կցանը,  
Սէլ ու գիւթան խրարուց կիւտարը,  
Չար թշնամին կուրխանայ,  
Ինչքան ուտը: շխանայ,  
Վով կսիրը սուրբի կիրակին,  
Չար թշնամու խարար չէնը,  
Ժամ պատարագին ականջ կենը,  
Խէրկան մօրկան օղորմի կտանը,  
Որ չպեանէք սուրբի կիրակին:  
Սուրբի կիրակին Աստու զրածնը,  
Ին տաս հրիշտակաց խուսքնը,  
Որ կպաշտէք ժամ պատարագ,  
Բահանի խուսքն էլ ականջ կցնէք,  
Չեր մեղաց թողութիւն կենէք,  
Դատաստան պարզիրս կերթար,  
Ով չպեանէք սուրբի կիրակին:  
Կիրակեաւոր չպախող սքրտ շաւ նեղնի,  
Ընու պախիլ հողուն տեղն ի,  
Ատուած ուր պերնով կորհնը,  
Դատաստանին շխար չբլնը,  
Ով չպեանէք սուրբի կիրակին:  
Վով կիրակին փէա կտաշը,  
Հուզին տեսա զժոխոց կմաշի.  
Ով չպեանէք սուրբի կիրակին:  
Վով կիրակին խաղաց սաղով,  
Ըն կխարնք չար սատանով,  
Ատարծու էրեսաց կրնզնը,  
Ազքեսա խողուն էլ ճար չբլը,  
Ով չպեանէք սուրբի կիրակին:  
Կիրակին մեծ պատուիրանքը,  
Ատարծու խօսքով զիրուածը,  
Վով Ատարծու խօսք չպախը,  
Ուր մարմին շախը: ուր խողին չպախը,  
Ով չպեանէք սուրբի կիրակին:

Դարեգին վարդ. Յովսէփեան.

